



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022թվականի N 1036

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
 - 1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 8 /ուր/ հատ,
 - 2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 6 /վեց/ հատ,
 - 3)համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 2 /երկու/ հատ:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՑԱԿԱՎՈՐՁՈՒՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական քաղաքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը, քառ./մ	Թույլտվության պրամտորման ժամանակահատվածը
1.	ԱՅ Սելյուրժա Միլոշայան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 31/1Ե	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 31/1Ե	ոգնից և ակտիվային խմբի վաճառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
2.	ԱՅ Սելյուրժա Միլոշայան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 31/1Ե	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 31/1Ե	ժխտության արդարադատականների կամ ժխտության արդարադատականների փոխարինիչների կամ ժխտության արդարադատականների նմանակների վաճառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
3.	ԱՅ Անահիթ Խոջայան	Ք.Երևան, 16-րդ թաղամաս, 33/22	Ք.Հրազդան, Միկրոշյան և թաղամաս, 55 չենք 1-ին հարկ	ոգնից և ակտիվային խմբի վաճառք	մինչև 100 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
4.	ԱՅ Անահիթ Խոջայան	Ք.Երևան, 16-րդ թաղամաս, 33/22	Ք.Հրազդան, Միկրոշյան և թաղամաս, 55 չենք 1-ին հարկ	ժխտության արդարադատականների կամ ժխտության արդարադատականների փոխարինիչների կամ ժխտության արդարադատականների նմանակների վաճառք	մինչև 100 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
5.	ԱՅ Սարգիս Գրիգորյան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 219/24	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 242/03	ոգնից և ակտիվային խմբի վաճառք	մինչև 50 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
6.	ԱՅ Սարգիս Գրիգորյան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 219/24	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 242/03	ժխտության արդարադատականների կամ ժխտության արդարադատականների փոխարինիչների կամ ժխտության արդարադատականների նմանակների վաճառք	մինչև 50 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
7.	ԱՅ Ռուզաննա Ասաբյան	Ք.Հրազդան, Շահումյան փողոց, գրուն 173	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 78 չենք 1-ին հարկ	ոգնից և ակտիվային խմբի վաճառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
8.	ԱՅ Ռուզաննա Ասաբյան	Ք.Հրազդան, Շահումյան փողոց, գրուն 173	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 78 չենք 1-ին հարկ	ժխտության արդարադատականների կամ ժխտության արդարադատականների փոխարինիչների կամ ժխտության արդարադատականների նմանակների վաճառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
9.	ԱՅ Քրիստինե Շահվաղյան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս 218/17	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 14 փողոց, 34 ասնադրի սրահ	ոգնից և ակտիվային խմբի վաճառք	մինչև 50 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
10.	ԱՅ Քրիստինե Շահվաղյան	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս 218/17	Ք.Հրազդան, Միկրոշյան թաղամաս, 14 փողոց, 34 ասնադրի սրահ	ժխտության արդարադատականների կամ ժխտության արդարադատականների փոխարինիչների կամ ժխտության արդարադատականների նմանակների վաճառք	մինչև 50 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար

11.	ԱԶ Ավերից Հայրապետյան	Ք-Հրազդան, Մաքրավան թաղամաս, 31ա	Ք-Հրազդան, Մաքրավան թաղամաս, 31ա	Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
12.	ԱԶ Ավերից Հայրապետյան	Ք-Հրազդան, Մաքրավան թաղամաս, 31ա	Ք-Հրազդան, Մաքրավան թաղամաս, 31ա	Փակտային արտադրամասերի կամ ծխախոտային արտադրամասերի փոխարինչների կամ ծխախոտային արտադրամասերի նմանակների վաճառք	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
13.	ԱԶ Սուրիկ Խաչատրյան	Ք-Հրազդան, Կենտրոն թաղամաս 84/42	Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 6-րդ ներանցք, 11	Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
14.	ԱԶ Սուրիկ Խաչատրյան	Ք-Հրազդան, Կենտրոն թաղամաս 84/42	Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 6-րդ ներանցք, 11	Խմելու խմիչքների կազմակերպում և իրականացում	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
15.	ԱԶ Սիլվա Սամոնյան	Ք-Երևան, Սևանի նրբանցք, 90	Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 4 թաղամաս, N 15	Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
16.	ԱԶ Վահե Գալստիսյան	Ք-Հրազդան, Վանաձոր թաղամաս, քրոն 131	Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 5-րդ թաղամաս, 1-ին հուլիսյան	Խմելու խմիչքների կազմակերպում և իրականացում	մինչև 26 ցառ/ձ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022թվականի N 1037

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Հարութ Ղարիբյանի 2022 թվականի նոյեմբերի 07-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Հարութ Ղարիբյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի 2. Անդրանիկի պողոտա 80/5 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 24052022-07-0129, գաղտնաբառ՝ NYEWSM3BYGPH) առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



09 նոյեմբերի 2022թ.
ք. Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ**

N 117 09 հոկտեմբեր 2022թ

Տրված է
կառուցապատող

**ՀԱՐՈՒԹ ՂԱՐԻՔՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.
ՀՐԱԶԴԱՆ, Ջրառար, 45**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

**Կուրայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Զ.Անդրանիկի պողոտա
80/5**

հասցեում

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

**Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկաման շենքի կառուցում,
միջինից բարձր ոխակայնության աստիճանի (III կարեգորիա), /18.08.2022թ.-ի
N83 շին. թույլտվությունը փոխարինվում է 07.11.2022թ.-ի N117 շին.
թույլտվությունով/, բազմանկյուն միահարկ և երկհարկանի շինություն**

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ոխակայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ ընտրագիրը, հիմնական ցուցանիշները)

շինարարական աշխատանքների կատարման, այդ
թվում՝

կառուցման

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման,
ուղղորդման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի
վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման
համար:

(նշվում են ոչ հիմնական
կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային
փաստաթղթերը՝
1)մշակվել են

**աշխատանքային նախագիծ „ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ“,
ՍՊԸ**

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի
անվանումը,

Արտոնագիր ՃԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007

կողմից,

(իջենցիայի համարը)

2)ստացել է (են) **25/10/2022** թ. N **N296/22** փորձագիտական դրական եզրակացությունը
(եզրակացությունները)

պարզ

(նշել փորձաքննության տեսակը)

«ԾԱՄՁՈՐ» ՍՊԸ ՔՊԼ 17744

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, (իջենցիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորագիրը՝

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի
երաշխավորության պայմանագրի համարը)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու
մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ
մարմինների

**ՀՐԱԶԴԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ,
09.11.2022թ.**

հետ:

(նշել մարմինների անվանումները և
համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական

աշխատանքներն իրականացնել **09 նոյեմբեր 2022 - 09 նոյեմբեր 2024**

ընթացքում:

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, իգենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստման, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքները)

6. (լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)

քանդման՝

(նշվում են ամրոցությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Կ.Տ.

ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022թվականի N 1038

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 16-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.«Հրազդան համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-ին, հայտարարել մրցույթ՝ համաձայն հավելված N1-ի:
- 2.«Հրազդան համայնքի թիվ 8 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 16:00-ին, հայտարարել մրցույթ՝ համաձայն հավելված N2-ի:
- 2.Հաստատել մրցույթի հայտարարությունը՝ համաձայն հավելված N3, 4-ի:
- 3.Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել հայտարարության հրապարակումը:
- 4.Մրցույթների նախապատրաստական աշխատանքների կատարումը վերապահել Հրազդան համայնքի ղեկավարի օգնական Ադրիանա Գալստյանին:
- 5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ

ՀՀ	ՀՈԱԿ-ի անվանումը	Անվանումը
1	2	
1	«Հրազդան համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Տնօրեն

ՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ

ՀՀ	ՀՈԱԿ-ի անվանումը	Անվանումը
1	2	
1	«Հրազդան համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Տնօրեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հրազդան համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

ՀՈԱԿ-ի տնօրենը՝

- ա) իրականացնում է ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը.
- բ) պատասխանատու է կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.
- գ) լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
- դ) կազմում է ՀՈԱԿ-ի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.
- ա) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).
- 3) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը.
- 4) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- 3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.
- 4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) գրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կեղծ են, լրիվ չեն կամ թերի են:

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 12:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում.
- նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ինքնակենսագրություն.
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ը Հրազդանի համայնքապետարանի շենքում / ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ, հեռախոս՝ 060-70-40-60/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2022 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ:

ՀՐԱՀԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հրազդան համայնքի թիվ 8 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

ՀՈԱԿ-ի փնտրենք՝

- ա) իրականացնում է ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը.
- բ) պատասխանատու է կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.
- գ) լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
- դ) կազմում է ՀՈԱԿ-ի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.
- ձ) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).
- 3) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը.
- 4) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- 3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.
- 4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) գրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կեղծ են, լրիվ չեն կամ թերի են:

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 16:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում.
- նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ինքնակենսագրություն.
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ը Հրազդանի համայնքապետարանի շենքում / ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ, հեռախոս՝ 060-70-40-60/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2022 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ:

ՀՐԱՀՂԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022թվականի N 1039

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.

1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ակոհոլային խմիչքների վաճառքի՝ 4 /չորս/ հատ,

2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,

3)համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 2 /երկու/ հատ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՅՈՒՑԱԿ
ԹՈՒՆԵՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱԴԱՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը	Իրավաբանական հասցեն	Գործունեության հասցեն	Տեղական քույրեղի գեղանկը	Շինության փաստի մակերեսը, քառ.մ.	Շինությունից ստացված համար
1.	ԱԶ Ռուզաննա Աբրահամյան	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 84/05	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 228 չեմքին հարող գյուղամեջ	ողեից և ակտիվային խմբերի վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
2.	ԱԶ Ռուզաննա Աբրահամյան	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 84/05	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 228 չեմքին հարող գյուղամեջ	ժխտության արգելադրանքների կամ ժխտության փոխարինիչների կամ ժխտության արգելադրանքների նմանակների վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
3.	ԱԶ Արմեն Ամիրխանյան	Ք. Չարենցավան, 5-րդ թաղամաս, 10/18	Ք. Հրազդան, Արզակների անդադարեցվածության 17-րդ գյուղամեջ	ողեից և ակտիվային խմբերի վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
4.	ԱԶ Արմեն Ամիրխանյան	Ք. Չարենցավան, 5-րդ թաղամաս, 10/18	Ք. Հրազդան, Արզակների անդադարեցվածության 17-րդ գյուղամեջ	ժխտության արգելադրանքների կամ ժխտության փոխարինիչների կամ ժխտության արգելադրանքների նմանակների վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
5.	ԱԶ Զոհրաբ Մելքոնյան	Կոտայքի մարզ, գյուղ Արզակ, 1 թաղամաս, գրուն 26	Կոտայքի մարզ, գյուղ Արզակ, 1 թաղամաս, գրուն 26	ողեից և ակտիվային խմբերի վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
6.	ԱԶ Զոհրաբ Մելքոնյան	Կոտայքի մարզ, գյուղ Արզակ, 1 թաղամաս, գրուն 26	Կոտայքի մարզ, գյուղ Արզակ, 1 թաղամաս, գրուն 26	ժխտության արգելադրանքների կամ ժխտության փոխարինիչների կամ ժխտության արգելադրանքների նմանակների վանառք	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
7.	ԱԶ Սամվել Արդան	Ք. Անան, Կարմիր բանակի փողոց, 54/35	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 11 գյուղի հարող գյուղամեջ	ողեից և ակտիվային խմբերի վանառք	մինչև 500 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
8.	ԱԶ Սամվել Արդան	Ք. Անան, Կարմիր բանակի փողոց, 54/35	Ք. Հրազդան, Միրզոյցյան թաղամաս, 11 գյուղի հարող գյուղամեջ	հանրային սեփականության իրականացում	մինչև 500 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
9.	ԱԶ Սուսաննա Խաչատրյան	Ք. Հրազդան, Ավարիցյան փողոց, գրուն 3	Ք. Հրազդան, Եսախանյան փողոց, 62/1	հանրային սեփականության իրականացում	մինչև 26 քառ./մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022թվականի N 1040

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 40.8քմ մակերեսով 07-001-0106-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 56:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10 նոյեմբերի 2022թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2022թվականի N 1041

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԵՎ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2022 թվականի օգոստոսի 05-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022ZXQSMG ծածկագիրը և Խաթաի Ապելյանի 2022 թվականի օգոստոսի 08-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 263 շենքի թիվ 6 բնակարանի բնակչուի Խաթաի Հարությունի Ապելյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց 28 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 24102012-07-0487, տրված՝ 2012 թվականի հոկտեմբերի 24-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 132.17քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և գրասենյակը՝ օրինականացման վճարը սահմանել 442 300 (չորս հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



10 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1042

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վասակ Հակոբյանի 2022 թվականի նոյեմբերի 8-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 5 փողոց 2 նրբանցք թիվ 2 տան բնակիչ Վասակ Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2188021, տրված՝ 2004 թվականի ապրիլի 30-ին) Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի 7:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



11 նոյեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1043

ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սերոբ Հարությունյանի 2022 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 10 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Սերոբ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 089683, տրված՝ 1998 թվականի դեկտեմբերի 18-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 10 շենքին հարող տարածքում գտնվող առևտրի սրահին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 10/10:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



11 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1044

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ
ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Կարեն Ավթանդիլյանի 2022 թվականի ապրիլի 28-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 32 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 4-ի N1813 գրավոր առաջարկությունը և Կարեն Ավթանդիլյանի կողմից տրված 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 952 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 316/10 հասցեում գտնվող 40.7քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 316/10 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 40.7քմ մակերեսով ավտոտնակը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29082022-07-0139, գաղտնաբառ՝ QVBAB18BJRV5/ գինը սահմանել 69000 /վաթսուհինը հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 40.7քմ մակերեսով հողամասը՝ 118000 /մեկ հարյուր տասնուհին հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 316 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Կարեն Ավթանդիլյանին (այսուհետ գնորդ):
3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում

որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1045

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ,
ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ
ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Արամ Հարությունյանի 2022 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 11-ին տրված տեխնիկական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 4-ի N 1803 գրավոր առաջարկությունը և Արամ Հարությունյանի կողմից տրված 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 944 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 3-րդ նրբանցք 68/6 հասցեում գտնվող 48.4քմ մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 3-րդ նրբանցք 68/6 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 48.4քմ մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27102022-07-0140, գաղտնաբառ՝ QX47XLFWT6E4/ գինը սահմանել 567 000 /հինգ հարյուր վաթսույնյոթ հազար/ դրամ և նույն հասցեում

գտնվող առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար առանձնացված 48.4քմ մակերեսով հողամասը՝ 61000 /վաթսունմեկ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 85 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Արամ Հարությունյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության իրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1046

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ,
ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Սոս Փիլիփոսյանի 2022 թվականի մայիսի 18-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 55 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 4-ի N1810 գրավոր առաջարկությունը և Սոս Փիլիփոսյանի կողմից տրված 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 950 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի 6-րդ փողոց 26/2 հասցեում գտնվող 17.9քմ մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 6-րդ փողոց 26/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 17.9քմ մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27102022-07-0142, գաղտնաբառ՝ KX4AAAIE3V2Q/ գինը սահմանել 318 000 /երեք հարյուր տասնութ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար առանձնացված 17.9քմ մակերեսով հողամասը՝ 80000 /ութսուն հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ

395 տան բնակիչ Սոս Փիլիփոսյանին (այսուհետ գնորդ):

3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝ թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4. Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



11 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022թվականի N 1047

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ
ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

